«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

վաղուց, շատ վաղուց տեղեկացած էի, որ մեր ընդհանուր ծննդավայր Վրաստանում լույս է տեսնում հայկական թերթ, որի գլխավոր առաքելությունը մեր եկրի համար ավանդական հանդուրժողականության, եղբայրության ու բարեկամության ամրապնդումն է:

Ինքս չուղղուրեթցի եմ, բնիկ թբիլիսցիների նման ես էլ, ճիշտ է, չեմ խոսում, սակայն հասկանում եմ հայերեն, շատ հայ բարեկամներ ունեմ, որոնցից էլ տեղեկացված եմ ձեր թերթի մասին: Ծառայության բերումով էլ, ինքնաբերաբար, տեղեկություններ ենք ստանում «Վրաստան»-ում հրապարակված հոդվածների, լուսաբանված նյութերի մասին: Եվ այն, ինչ իմանում ենք, վկայում է, որ «Վրաստանը», իրոք, այն պարբեականն է, որը Վրաստանի հայազգի բնակչությանն է հասցնում այն անհրաժեշտ լրատվությունը, որը նպաստում է մեր հասարակության ինտեգրմանը, երկրի սոցիալական եւ քաղաքական կյանքում մեր հայազգի քաղաքացիների ներգրավմանը:

Եվ, անկեղծ ասած, խմբագրության նման կուրսը չի զարմացնում, քանի որ արդեն երկար տարիներ «Վրաստանի» ստեղծագործական կոլեկտիվը ղեկավարում է պրոֆեսիոնալ լրագրող, փորձառու քաղաքագետ, իմ վաղեմի բարեկամ Վան Բայբուրթյանը:

Թանկագի'ն «վրաստանցիներ», կրկին անգամ ցանկանում եմ ձեզ շնորհավորել թերթի 10-ամյա հոբելյանի առիթով, պարբերականին մաղթել երկարակեցություն, խմբագրության յուրաքանչյուր աշխատողին քաջառողջություն եւ ստեղծագործական հաջողություններ:

ԳԻԱ ՎՈԼՍԿԻ
Վրաստանի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ

«ՎՐԱՍՏԱՆ», ՄԵՆՔ ՀՊԱՐՏԱՆՈՒՄ ԵՆՔ ՔԵԶԱՆՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«ամենահիններից» մեկն է, հետեւաբար, ամենափորձվածը, ամենահեղինակավորը... Չափազանցություն չհամարեք, քանի որ ասածս հիմնված է մեր՝ ախալքալաքցիների պնդումների վրա, որ եթե «Վրաստան»-ում ինչ-որ բանի մասին գրվել է, հետեւաբար, դա իրականություն է: Այդպես էին ախալքալաքցիները դատում տասնյակ տարիներ առաջ, այդպես են դատում նաեւ հիմա, ստանալով «Վրաստանի» հերթական համարը: Ինչպես տասնյակ տարիներ առաջ, այսօր էլ, չնայած բազմալիք հեռուստատեսության ու համացանցի, մեր տեղեկատվության հիմնական եւ, ամենակարեւոր, հուսալի աղբյուրը «Վրաստանն» է:

Այդ կապակցությամբ՝ մի խնդրանք. լավ կլիներ, եթե, անցած տարիների օրինակով թերթն իր սեփական թղթակիցն ուներ Ախալքալաքիում, ինչը թույլ կտար թերթի էջերում առավել լուսաբանել մեր մունիցիպալիտետի կյանքը:

Թանկագի'ն բարեկամներ, անկեղծորեն ու ջերմությամբ շնորհավորում եմ մեր սիրելի «Վրաստանի» մեկդարյա հոբելյանը, երկարակեցություն ու ստեղծագործական բարձունքներ մեր հարազատ պարբերականին, իսկ խմբագրության կոլեկտիվին մաղթում եմ առողջություն եւ հաջողություն ինչպես անձնական կյանքում, այնպես էլ՝ հայրենանվեր գործունեության մեջ:

ԱՐՄԵՆ ՄԱՐԱՆԳՈԶՅԱՆ
Ախալքալաքիի փոխքաղաքապետ

ՓԱՌՔ ՈՒ ՊԱՏԻՎ ՔԵԶ, «ՎՐԱՍՏԱՆ»



Փառք ու պատիվ Քեզ, Մեսրոպատառ «Վրաստան»: Թեպետ մի փոքր ուշացումով եմ գրում, սակայն ժողովրդական ասացվածքն ասում է՝ «Լավ է ուշ, քան՝ երբեք»:

Մեծարգո պարոն Վան, ի սրտե ու ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ եւ Ձեր գլխավորած «Վրաստանի» խմբագրության բոլոր աշխատակիցներին, մեր սիրելի հայալեզու եւ ամբողջ Վրաստանում հարգված ու փառաբանված թերթի 100-ամյա հոբելյանի առիթով: Մաղթելով ձեզ բոլորիդ արեւշատություն, երջանկություն ու բեղմնավոր աշխատանքի բազում տարիներ:

Նախապես ուզում եմ ասել, որ մեր հարազատ հայապահպան «Վրաստան» թերթի մշտական բաժանորդն եմ, ու ընթերցելով թերթը, զգում եմ հանրապետությունում ունեցած պարբերականի ուժն ու հարգանքը նրա հանդեպ, քանի որ շնորհավորանքներ են հնչում «Վրաստանի» 100-ամյա հոբելյանի առիթով եւ ոչ միայն մեր հանրապետության գործիչների, այլեւ սփյուռքից ու Մայր Հայաստանից:

Սիրելի ընթերցող, կոչ եմ անում չկորցնել մեր սիրելի հայատառ թերթի նկատմամբ ունեցած սերն ու հարգանքը: Չէ՞ որ նա բարեկամության կամուրջ է հայ եւ վրաց եղբայրական ժողովուրդների միջեւ:

ՄԵՍՐՈՊ ԵՍՈՅԱՆ
ք.Նինոծմինդա

ՓԱՐԱՋԱՆՈՎՅԱՆ ՆՌՆԵՆԻ՝ ՊԱՆԹԵՈՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԸ ՇԱՂՎԵԺ ՎՐԱԺԱԿԱՆ ՀՈՂԻՆ

Մարտի 28-ին Թբիլիսիի Հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում տնկարկվեց աշխարհահռչակ կինոռեժիսոր, սցենարիստ ու նկարիչ Սերգո Փարաջանովի հիշատակը հավերժացնող ռոնենի: Միջոցառման նախաձեռնությունը վրաց ռեժիսոր Գիա Ալավիձեինն էր, ով ավելի հայտնի է Խոսե Մաջիներ անունով, աջակիցներն էին Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոնը (տնօրեն՝ Գիսանե Հովսեփյան), «Վրաստան» թերթն ու Երեւանի Սերգո Փարաջանովի անվան տուն-թանգարանը (տնօրեն՝ Մարիաննա Մանուչարյան):

Հիշեցնենք, որ ավելի վաղ, մարտի 17-ին, Խոսե Մաջիներեն նույն նախաձեռնությամբ հանդես եկավ նաեւ մայրաքաղաքի Բուսաբանական այգում՝ Փարաջանովի ռոնենին անվանելով Բայա՝ որպես խորհրդանիշ ռեժիսորի ֆիլմերում հանդես եկած մուսա կանանց, այդ թվում՝ Սոփիկո Ճիաուրելու: Իսկ այս նորը, կրկին հավերժացնելով հանճարի հիշատակը, կկրի Փարաջանովի մտերմի, պանթեոնում հանգչող մեծանուն նկարչուհու՝ Գայանե Խաչատրյանի անունը:

Երեւանի Կոմիտասի անվան պանթեոն, Սերգո Փարաջանովի շիրիմը

Գագիկ Աղաջանյանը Երեւանի Փարաջանովի անվան տուն-թանգարանի տնօրեն Մարիաննա Մանուչարյանից ընդունեց Թբիլիսի ուղարկվող հողը

Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը՝ պատմելով դրվագներ իր եւ մեծն ռեժիսորի հանդիպումներից, ցանկություն հայտնեց պանթեոնում տեսնել նաեւ Փարաջանովին նվիրված հուշակոթող:

Տնկարկման արարողությունը սկսվեց հոգեհանգստյան կարգով՝ Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանի եւ Քվեմո Քարթլիի Կարմիր եւ Շահումյան գյուղերի հոգեւոր հովիվ Ջավեն վարդապետ Յազիչյանի մատուցմամբ:

Նռնենու շիվն իր տեղը գտավ Գայանե Խաչատրյանի շիրմի մերձակայքում: Փոքրիկ ծառն արդեն իսկ իր շուրջ համախմբեց հայ ու վրացի մտավորականներին: Ամեն մեկն իր մասնակցությամբ, նռնենու շուրջ ջուր, հող ու խորհրդանշական գինի շաղելով փորձեց հարգանքի իր տուրքը մատուցել հայկական ծագման մեծն թբիլիսցուն: Հիշարժան օրն իր մեջ եւս մեկ անակնկալ էր կրում, որը ոչ այլ ինչ, քան փարաջանովյան էության վառ արտահայտումն էր: Հակառակ համավարակի թելադրած սահմանափակումների, Վան Բայբուրթյանի կազմակերպմամբ եւ գործարար եղբայրներ Գագիկ ու Ռաֆայել Աղաջանյանների անմիջական մասնակցությամբ եւ հովանավորությամբ, Երեւանի Կոմիտասի անվան պանթեոնից, Սերգո Փարաջանովի շիրմից հող էր բերվել Թբիլիսի: Հայկական հողը շաղվեց նռնենու վրացական հողի շուրջ՝ խորհրդանշելով եւ ընդգծելով ռեժիսորի հայ-վրացական արմատներով պայմանավորված յուրահատուկությունն ու հզորությունը: Վան Բայբուրթյանն իր ելույթում նշեց, որ շուտով պանթեոնում կտեղադրվի նաեւ հուշատախտակ, ուր չորս լեզուներով կգրվի Սերգո Փարաջանովի մասին:

Միջոցառման ավարտին խոսեցինք օրվա նախաձեռնողներից մեկի՝ «Զրույցներ Փարաջանովի մասին» ֆիլմաշարի (16 ֆիլմ) հեղինակ Գիա (Խոսե) Ալավիձեի հետ: Խոսեն անկախ ռեժիսոր, օպերատոր եւ մոնտաժող է: Ֆիլմաշարը նկարահանել է սեփական ծախսերով: Աշխատում է Թբիլիսիի Կովկասյան տանը, ֆիլմեր է նկարահանում, դասավանդում կիրակնօրյա դպրոցում, ուր սովորում են Վրաստանի հակամարտող շրջաններում բնակվող ընտանիքների երեխաները: «Վրաստանի» հետ զրույցում Փարաջանովի անձնուրաց նվիրյալն ասում է.

«Համոզված եմ, մի կյանքը բավական չէ հանրահռչակ ռեժիսորին, սցենարիստին ու նկարչին ներկայացնելու համար: Փարաջանովն օժտված էր մոգական ուժով: Յուրաքանչյուր մարդու մեջ խոսում է կամ Աստված, կամ սատանան: Սերգոն իր արվեստի միջոցով հասցնում էր աստվածայինն մակարդակի: Եվ խոսում այն մասին, որ Աստված գեղեցկություն է, գեղեցկության սկիզբը:

Փառաջանովը գնաց Երեւան, բայց սիրտը թողեց այստեղ՝ Թբիլիսիում...»:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Լուսանկարները՝ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ (Երեւան), ՅՈՒՐԻ ՄԵՉԻՏՈՎԻ

Տնկարկման արարողության մի խումբ մասնակիցներ

COVID - 19

ՍԿՍՎԵՑ «PFIZER»-ՈՎ ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ 65 ՏԱՐԵԿԱՆԻՑ ԲԱՐՁՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Վրաստանի առողջապահության նախարարության տարածած հաղորդագրության մեջ նշված է, որ ապրիլի 1-ից, բժշկական անձնակազմը եւ 65-ից բարձր անձինք կկարողանան հերթագրվել «Pfizer»-ով պատվաստումների համար:

Հաղորդագրության համաձայն, բժշկական անձնակազմի եւ 65 տարեկանից բարձր անձանց պատվաստումը «Pfizer»-ով հնարավոր կլինի իրականացնել ապրիլի 15-ից վեց բժշկական հաստատություններում՝ Թբիլիսի. Բոկերիայի անվան ռեֆերալ հիվանդանոցում, Կովկասյան բժշկական կենտրոնում, Թբիլիսիի հանրապետական հիվանդանոցում եւ «Ամտել» կլինիկայում, Բաթումիի հանրապետական հիվանդանոցում, Քութայիսի. Ցխակաձեի անվան Արեւմտյան Վրաստանի միջամտական բժշկության ազգային կենտրոնում:

Պատվաստումների համար գրանցումը հասանելի կլինի ինչպես առցանց, այնպես էլ՝ բժշկական հաստատություններում, որոնք մասնակցում են կորոնավիրուսի պատվաստումներին:

Պատվաստումները դեռ հասանելի կլինեն գրանցման հարթակում https://booking.moh.gov.ge/

Գրանցման հրահանգները ներկայացված են հետեւյալ հղումով՝ https://fb.watch/4c2ml8hKtj/

«Կովիդ 19»-ի դեմ պատվաստումների մասին մանրամասն տեղեկությունների համար գործում է թեժ գիծ - 15 22, ներառյալ հանգստյան օրերը, ժամը 09:00-ից 23:00-ը:

Պատվաստումը նվազեցնում է վարակի, հիվանդանալու եւ մահացության ռիսկը:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, առողջապահական գերատեսչությունները եւ որակյալ բժիշկները խորհուրդ են տալիս պատվաստվել «Կովիդ 19»-ի դեմ:

«Կովիդ 19»-ի պատվաստումը անհատի իրավունքն է եւ համընդհանուր պատասխանատվություն: Պատվաստումը կամավոր է», - ասվում է Վրաստանի առողջապահության նախարարության հաղորդագրության մեջ:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է 130 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 130 286 262 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 2 842 281 հազարը: Ապաքինվել է 104 միլիոն 974 513 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **31 244 639** դեպք: Այստեղ մահացածների թիվը **566 611** է, երկրորդ տեղում **Բրազիլիան** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **12 842 717**-ի, մահացածներինը՝ **325 559**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Հնդկաստանն** է: Այստեղ վարակվել է **12 303 131**, մահացել՝ **163 428** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **4 695 082**, վարակի հետեւանքով մահացել՝ **95 976** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Թուրքիան, Իսպանիան ու Գերմանիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **194 852-ի**, մահացածներինը՝ **3 552-ի**, ապաքինվածներինը՝ **174 545-ի**:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **263 961** մարդ: Վարակից մահացել է **3 593,** ապաքինվել՝ **238 985** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **282 789,** մահացել՝ **3 798,** ապաքինվել՝ **273 930** մարդ:

*Ապրիլի 2-ին կորոնավիրուսով վարակման **529** նոր դեպքերից **281-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 45, Իմերեթիում՝ 34, Քվեմո Քարթլիում՝ 21, Շիդա Քարթլիում՝ 30, Գուրիայում՝ 23, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 78, Կախեթիում՝ 2, Մցխեթա-Մթիանեթիում՝ 5, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 7, Սամցխե-Ջավախեթիում՝ 3***

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ 55-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ

ԵՐԿԻՐԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՎԱՐԱԿԻ ԲՌՆԿՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԱԼԻՔԻ ՇԵՄԻՆ

Վրաստանի առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեի խոսքով, պատվաստումների խորհրդի որոշմամբ, պատվաստման գործընթաց կներգրավվեն նաեւ 55 տարեկանից բարձր քաղաքացիներ:

Նախարարի խոսքով, պատվաստանյութի պահանջարկը մեծ է այս տարիքային խմբում:

- Մենք քննարկել ենք այն օրացույցը, որով այսօր Վրաստանը առաջնորդվում է պատվաստումների գործընթացն իրականացնելիս: Խորհուրդը լրացուցիչ որոշում կայացրեց այն փաստի կապակցությամբ, որ պատվաստումների խմբում ավելացնելու ենք 55-ից բարձր տարիքի քաղաքացիներին: Դա պայմանավորված է նրանով, որ մենք նկատել ենք, թե որքան հետաքրքրություն եւ ակտիվություն կա մեր 65 տարեկանից բարձր քաղաքացիների շրջանում: Նաեւ մեծ պահանջարկ կար խմբի մեջ, որը ներառում էր 55-ից 65 տարեկան մարդկանց,- ընդգծեց նախարարը:

Միաժամանակ, նախարարը հայտարարեց, որ Վրաստանը գտնվում է կորոնավիրուսի 3-րդ բռնկման փուլում, եւ բնակչությանը կոչ արեց խստորեն հետեւել մասնագետների խորհրդատվություններին, «չարհամարհել այս փուլում գործածվող գործիքները»:

Նախարարը ասաց նաեւ, որ այս պահին կորոնավիրուսի դեմ արդյունավետ պայքարի նպատակով համալիր միջոցառումներ են ձեռնարկվում: Նախկին միջոցներին գումարվել է զանգվածային պատվաստումը: Վարակաբաններից ոմանք կարծում են, որ բռնկման երրորդ ալիքը ամռան ամիսներին է վրա հասնելու, չի լինելու այնքան զանգվածային, որքան նախորդ աշնանն էր:

ՉԵՂԱՐԿՎԵՑ ԵՎՍ ԵՐԿՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

Ապրիլի 1-ից Վրաստանի կառավարությունում գործող միջգերատեսչական խորհրդի որոշմամբ, երկրում կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով սահմանված եւս 2 սահմանափակում է վերացվում:

Մասնավորապես, ապրիլի 1-ից տրված հանձնարարականների կատարմամբ թույլատրել մանկական ժամանցի կենտրոնների աշխատանքը, կինոթատրոնների աշխատանքը:

Հիշեցնենք, որ մարտի 19-ից երկրում վերացվեց ռեստորաններում կենդանի երաժշտության արգելքը, 24-ից՝ տաքսիներում ուղեւորների թվի արգելքը:

Այս փուլում ուժի մեջ է մնում երեկոյան ժամերին տեղաշարժի արգելքը՝ պարետային ժամը:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՉԵ. «ԵՐԿՐՈՒՄ ՀԱՄԱՎԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՎԱՏԹԱՐԱՆՈՒՄ Է»

ՀՈՒԼԻՍԻՑ ԿՍԿՍՎԵՆ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ

Մարտի 30-ին միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստից հետո, Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն հայտարարեց, որ Վրաստանում վատթարանում է համավարակաբանական իրավիճակը:

Նրա խոսքով, երկրում արձանագրված կորոնավիրուսի օրեկան մակարդակը մտահոգիչ է, եւ հանձնարարականների կատարման վերահսկողությունը պետք է խստացվի:

- Ցավոք, երկրում համավարակային իրավիճակը վատթարանում է: Դրական ցուցանիշը, որ բավական լավ դինամիկա է ունեցել, վերջին երկու շաբաթվա ընթացքում թեեւ քիչ, սակայն վատթարացման միտում է գրանցում: Հատկապես այսօր արձանագրված նոր դեպքերի թիվը շատ մտահոգիչ է:

Աճել է նաեւ օրեկան դրական ցուցանիշը: Վերջին երկու շաբաթվա ընթացքում նկատվում է վատթարացման միտում: Սա կարող է հանգեցնել ողբալի արդյունքի,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն՝ հավելելով, որ անհրաժեշտ է հետեւել հանձնարարականներին, հակառակ դեպքում, երկրում հնարավոր է սկսվի կորոնավիրուսի երրորդ ալիքը:

Նա նշեց նաեւ, որ հուլիսից կանցնենք, այսպես կոչված, զանգվածային պատվաստման:

ՎՏԱՆԳԻ ԵՆՔ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ. ԴԻՄԱԿ ԿՐԵԼՈՒ ՑՈՒՑԱՆԻՇԸ ՆՎԱԶՈՒՄ Է

Մարտին Վրաստանում կորոնավիրուսի թվերն ավելացել են, ակտիվ դեպքերի քանակը՝ նույնպես:

Ըստ հիվանդությունների կանխարգելման եւ հանրային առողջության կենտրոնի տեղեկության, օրական 300-400 դեպքը քիչ չէ, սա ավելացնում է ակտիվ դեպքերի քանակը: Սա վկայում է, որ ահազանգելու ժամանակն է եւ հնարավոր է դեպքերի կտրուկ աճ գրանցվի:

Հիվանդության 3-րդ բռնկման իրական վտանգ կա՝ ահազանգում է մասնագետը: Պատվաստումը արագ արդյունքի չի հանգեցնելու՝ վարակի շրջանառության նվազման տեսանկյունից, մնում է հետեւել հիմնական խորհրդատվություններին:

Երկրում դիմակ կրելու ցուցանիշը՝ 43 տոկոս է, սա անհանգստացնող է. Ըստ Գամղրելիձեի՝ դիմակի ռեժիմը պետք է հասցնել 90 տոկոսի, այս դեպքում հնարավոր է խուսափել նոր բռնկումից: Դիմակից ոչ պակաս կարեւոր է հեռավորության, հիգիենայի պահպանումը, մարդկային կուտակումների բացառումը:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ՝ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Վրաստանի Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնը հրապարակեց կորոնավիրուսի պատվաստանյութի առաջին դեղաչափ ընդունած քաղաքացիների համար հանձնարարականներ, խնդրելով հետեւել սահմանված կանոններին:

Ինչպես նշված է հանձնարարականներում, նույնիսկ պատվաստանյութի առաջին դեղաչափը ստանալուց հետո, հարկավոր է դիմակ կրել ինչպես բաց, այնպես էլ՝ փակ տարածքներում, պահպանել առնվազն մեկ մետր հեռավորություն եւ ձեռնպահ մնալ մարդաշատ վայրեր այցելելուց: Քաղաքացիները պետք է հաշվի առնեն նաեւ քաղաքային եւ միջքաղաքային տրանսպորտով տեղաշարժման ժամանակ կիրառված սահմանափակումները, իսկ վարակին բնորոշ ախտանիշների արտաբերման դեպքում՝ կատարեն կորոնավիրուսի թեստ:

Հիշեցնենք, որ Վրաստանում պատվաստումները սկսվել են մարտի 15-ին:

Բրիտանա-շվեդական «AstraZeneca» պատվաստանյութի 43 200 դեղաչափի խմբաքաանակը Թբիլիսի է ժամանել մարտի 13-ին: «Pfizer» ամերիկա-գերմանական պատվաստանյութի լրացուցիչ 29 500 դեղաչափն էլ երկիր է առաքվել մարտի 25-ին:

Մարտի 25-ից Վրաստանը սկսել է պատվաստել ոչ միայն բժշկական հաստատությունների աշխատակիցներին, այլեւ՝ 65 տարեկանից բարձր քաղաքացիներին: Պատվաստվողները կարող են ընտրել երկու դեղերից մեկը՝ «Pfizer» կամ «AstraZeneca»:

«Pfizer»-ով պատվաստումը Վրաստանում սկսվեց մարտի 30-ին: Քանի որ այս պատվաստանյութի պահպանումը պահանջում է մինուս 80 աստիճան ջերմաստիճան, համապատասխան ենթակառուցվածքով հագեցած է վեց կլինիկա, դրանցից չորսը գտնվում են Թբիլիսիում, մյուս երկուսը՝ Բաթումիում եւ Քութայիսիում:

Պատվաստման համար հնարավոր է գրանցվել Վրաստանի առողջապահության նախարարության հատուկ էլեկտրոնային հարթակում:

Էջը պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԱՊՐԻԼԻՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԿՏԱՄ, ԹԵԵՎ ՄԻՆՉԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԵՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությամբ՝ խորհրդարանական ուժերի հետ ձեռքբերած պայմանավորվածության համաձայն, հունիսի 20-ին անցկացվելիք արտահերթ խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ, երկրի Սահմանադրության պահանջներին համաձայն, ինքը, ամենայն հավանականությամբ, ապրիլին հրաժարական կտա վարչապետի պաշտոնից, թեպետ մինչեւ ընտրությունները կշարունակի կատարել կառավարության ղեկավարի պարտականությունները:

Հիշեցնենք, որ Հայաստանի Սահմանադրության 93-րդ հոդվածի համաձայն, Ազգային ժողովի հերթական եւ արտահերթ ընտրությունները նշանակում է Հայաստանի նախագահը: Արտահերթ ընտրությունն անցկացվում է Աժ-ի արձակվելուց ոչ շուտ, քան երեսուն, եւ ոչ ուշ, քան քառասունհինգ օր հետո: Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՊԱՐԶ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ՝ ԱՌԱՆՑ ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ

Ապրիլի 1-ին Հայաստանի Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով նախատեսվում է ընտրություններից առաջ հանել ռեյտինգային ցուցակները՝ ընտրությունների գնալով պարզ համամասնական ընտրակարգով: Նախագիծը քվեարկությամբ ստացավ 82 կողմ ձայն:

Նախագծով նախատեսվում է հանել ռեյտինգային ցուցակները: Այս փոփոխությունից հետո քաղաքացին ընտրատեղամասում ընտրելու է միայն քաղաքական ուժին: Այսինքն՝ քվեաթերթիկներից ընտրելու է մեկ քվեաթերթիկ եւ առանց որեւէ նշում կատարելու, դնելու է ծրարի մեջ ու գցելու է քվեատուփը:

Աժ-ում նախագծի ընդունումից հետո նախատեսվում է, որ այն դեռ պետք է ստորագրի Հանրապետության նախագահը:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ

Մարտի 28-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Արմավիրի մարզի համայնքների բնակիչների հետ հանդիպմանը, հայտարարեց, որ իշխանությունները կոռուպցիայի դեմ պայքարում լինելու են հետեւողական, եւ համոզմունք հայտնեց, որ դա նաեւ ժողովրդի պահանջն է:

Նա խոստովանեց, որ այդ հարցերում կան որոշակի հիմնախնդիրներ, բայց մյուս կողմից՝ հիշեցրեց, որ 2018 թվականին իշխանությունները խոստացել են, որ յուրաքանչյուրին տալու են հնարավորություն, յուրաքանչյուրին տալու են շանս:

Նրա խոսքով, ժողովուրդն իշխանություններին մեղադրում է, որ շանսը չարաշահողները պատժի հանգրվանին չեն հասցրել: Փաշինյանի գնահատմամբ, իրենց կառավարման բոլոր երեք տարիները, ըստ էության, ճգնաժամային կամ կիսաճգնաժամային են եղել.

- 2018 թվականին հետհեղափոխական կայունություն հաստատելու խնդիր կար, մենք 2018 թվականից անընդհատ բունտերի առաջ ենք կանգնում,- ընդգծեց Հայաստանի վարչապետը՝ հավելելով.

- Ես համաձայն եմ, որ ձեր տված շանսերը մենք էլ պետք է չմսխենք, մենք ձեր տված շանսերը պետք է օգտագործենք: Ես դա հասկանում եմ եւ ուզում եմ ներողություն խնդրել այն բոլոր դեպքերի համար, որ մենք ձեզ հիասթափեցրել ենք: Բայց մենք սկզբունքորեն կանգնած ենք:

Վարչապետի խոսքով, ժողովուրդը շարունակաբար պահանջում է, որ Հայաստանը երկար տարիներ կոռուպցիայով թալանած անծիկք դուրս շպրտվեն ընդհանրապես քաղաքական դաշտից եւ մեր իրականությունից:

- Հայաստանում մեր իշխանության գալուց հետո տասնյակ կոռուպցիոներների դեմ քրեական գործեր են հարուցվել: Նրանցից շատերը փախուստի մեջ են, հետախուզման մեջ են,- նշեց Փաշինյանը:

«AstraZeneca» ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԸ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանը «Կովաքս» հարթակից ստացել է «Աստրազենեկայի» պատվաստանյութի առաջին խմբաքանակը:

Հայաստան է ներկրվել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստանյութի՝ «COVAX FACILITY» նախաձեռնության միջոցով առաջին խմբաքանակը՝ 24 հազար դեղաչափ: Այն նախատեսված է ռիսկի խմբերի շրջանում, մասնավորապես՝ բուժաշխատողների, 65 տարեկան եւ բարձր տարիքի անձանց, 16-ից 64 տարեկան քրոնիկ հիվանդների, տարեցների խնամքի կենտրոնների բնակիչների եւ աշխատակիցների, սոցիալական խնամքի կենտրոնների աշխատակիցների, կամավորության սկզբունքով, կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստելու համար: COVID-19-ի դեմ «AstraZeneca» ընկերության պատվաստանյութը ձեռք է բերվել «COVAX FACILITY» նախաձեռնության շրջանակներում: «AstraZeneca» պատվաստանյութն ունի Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից արտակարգ իրավիճակներում կիրառման թույլտվություն: Այն կիրառելի է 18 տարեկան եւ բարձր տարիքի անձանց համար:

Ըստ առողջապահության նախարարության՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի կանխարգելման գործընթացում առանցքային դեր ունի պատվաստանյութի կիրառումը, թեպետ, միաժամանակ, նշվում է, որ Հայաստանում պատվաստումներն իրականացվում են բացառապես կամավորության սկզբունքով:

ԵԹԵ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՅԱՆԱՆ ՀԱՋՈՐԴ ԿԻՐԱԿԻ, ԱՊԱ 31,7 ՏՈԿՈՍԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՔՎԵԱՐԿԵԼ «ԻՄ ՔԱՅԼԻ» ՕԳՏԻՆ, ԻՍԿ ...

Հայաստանում անցկացված հարցման արդյունքներով «Իմ քայլը» դաշինքի օգտին կքվեարկեր 31,7 տոկոսը, եթե խորհրդարանական ընտրությունները լինեին հաջորդ կիրակի:

«Եթե խորհրդարանական ընտրությունները լինեին հաջորդ կիրակի, ո՞ր քաղաքական ուժի օգտին կքվեարկեիք» հարցին՝ ի պատասխան հարցման ենթարկվածների 31,7 տոկոսը նշել է «Իմ քայլը» դաշինքի օգտին, Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի օգտին նշել է 5,9 տոկոսը, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության օգտին՝ 4,4 տոկոսը, «Լուսավոր Հայաստան» կուսակցության օգտին՝ 2,7 տոկոս, Հայաստանի Հանրապետական կուսակցության օգտին՝ 2,4 տոկոսը, Հայ Յեղափոխական դաշնակցության օգտին՝ 2,1 տոկոսը, «Հայրենիքի փրկության շարժման» վարչապետի թեկնածու Վազգեն Մանուկյանի օգտին՝ 1 տոկոսը, «Սասնա ծռեր» կուսակցությանը՝ 0,5 տոկոսը, «Հայրենիք» կուսակցությանը՝ 0,4 տոկոսը, «Հանրապետություն» կուսակցությանը՝ 0,4 տոկոսը եւ «Քաղաքացու որոշում» կուսակցությանը՝ 0,1 տոկոսը: «Ոչ մեկին» նշել է 24,6 տոկոսը եւ դժվարացել է պատասխանել այս հարցին 20 տոկոսը: 3,9 տոկոսը տարբեր այլ կուսակցությունների է նշել:

Մարտի 26-29-ը անցկացված հարցումներին մասնակցել է 801 անձ՝ հեռախոսային զրույցի միջոցով:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Մարտի 30-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, տեղի է ունեցել Անվտանգության խորհրդի հերթական նիստը:

Նիստում քննարկվել են Հայաստանի եւ Արցախի շուրջ ֆեւավորված անվտանգային միջավայրին, տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին եւ Հայաստանի կառավարության հետագա քայլերին վերաբերող հարցեր:

ԿԱՅԱՑԱՎ ԱՅՎԱԶՅԱՆ-ԼԱՎՐՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մոսկվայում ապրիլի 1-ին, ԱՊՀ արտաքին գործերի նախարարների նիստի շրջանակում, կայացավ Հայաստանի եւ ՌԴ ԱԳ նախարարներ Արա Այվազյանի եւ Սերգեյ Լավրովի հանդիպումը: Կողմերը քննարկեցին Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եւ 2021 թվականի հունվարի 11-ի պայմանավորվածությունների կատարման ընթացքը:

Հատուկ ուշադրություն հատկացվեց Լեռնային Ղարաբաղում հումանիտար արշավանքման արդիական հարցերին, տարածաշրջանում տնտեսական եւ տրանսպորտային կապերի ապաշրջափակմանը:

Նախարարները մտքեր փոխանակեցին հայ-ռուսական համագործակցության արդիական հարցերի, այդ թվում՝ բարչր մակարդակով կապերի, երկու պետությունների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյա հոբելյանի նախապատրաստական աշխատանքների շուրջ:

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԵՑՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշը 2021-ի հունվար-փետրվարին 6.7 տոկոսով նվազել է 2020-ի նույն ժամանակահատվածի համեմատ, սակայն տարվա երկրորդ ամսին հունվարի նկատմամբ տնտեսությունն ակտիվացման միտումներ է ցուցաբերել՝ գրանցելով աճի երկնիշ ցուցանիշ՝ 12.4 տոկոս:

2021 թվականի հունվար-փետրվարին սպառողական գների ինդեքսն աճել է 4.9 տոկոսով, արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը՝ 6.2 տոկոսով:

ՄԱՀԱՑԵԼ Է ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ (ԿՈՄԱՆԴՈՍ)

Մարտի 31-ին, 81 տարեկան հասակում մահացել է Արցախի հերոս, ծնունդով թբիլիսցի, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանը (Կոմանդոս):

Արկադի Տեր-Թադեւոսյանը ծնվել է 1939 թվականին: Թբիլիսիում, «Մետրոշին» կոչվող թաղամասի թիվ 103 դպրոցն ավարտելուց հետո, Տեր-Թադեւոսյանն ընդունվել եւ ավարտել է Բաքվի զինվորական ուսումնարանը, այնուհետեւ՝ Լենինգրադի տրանսպորտի եւ թիկունքի ռազմական ակադեմիան:

Այսօր՝ ապրիլի 3-ին, ժամը 13:00-ին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում կմատուցվի Արկադի Տեր-Թադեւոսյանի հոգեհանգստի արարողությունը:

«Վրաստան» թերթը իր ցավակցությունն է հայտնում Արկադի Տեր-Թադեւոսյանի ընտանիքին եւ Թբիլիսիում ապրող նրա հարազատներին:

CyanMagentaYellowBlack

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՊՐԻԼ

4.04.2021
Սուրբ Հարության տոն

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է նաեւ Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից եւ վերադարձ առ Աստված: Զատիկը թե' Հին եւ թե' Նոր Կտակարաններում համարվում է 5 տաղավար տոներից մեկը:

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության՝ Սուրբ Զատկից սկսած հիսուն օրերը մինչեւ Հոգեգալուստ (Պենտեկոստե) Հայ Առաքելական Եկեղեցում կոչվում են Հինունք կամ Հինանց շրջան՝ նվիրված Տիրոջ Հարության եւ Համբարձման խորհրդին: Այդ պատճառով ամբողջ շրջանը կոչվում է Տերունի: Հինունք անունը ծագում է հիսունքից:

7.04.2021 Ավետումը Սուրբ Աստվածածնի

Ապրիլի 7-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է իր ամենակարեւոր տոներից մեկը՝ Սուրբ Աստվածածնի ավետումը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ կաթողիկոսի բարձր տնօրինությամբ՝ Ավետման տոնը հռչակվել է մայրության օրինության օր: Հայաստանյայց Առաքելական բոլոր եկեղեցիներում այդ օրն օրհնության կարգ է կատարվում:

10.04.2021 Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օր

Սուրբ Հարության տոնի հաջորդ շաբաթ օրը Հայ Առաքելական Եկեղեցում Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օրն է:

ՍՊՈՐՏ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ «ՌԵԳԲԻ ԵՎՐՈՊԱ» ՄՐՑԱՇԱՐԻ ՉԵՄՊԻՈՆ

«Ռեգբի Եվրոպայի» 2021 թվականի առաջնության մրցաշրջանի չորրորդ խաղում, Վրաստանի հավաքականը հյուրընկալեց ավանդական մրցակցին՝ Ռումինիայի հավաքականին, հաղթանակելով 28:17 հաշվով:

Այդ հաղթանակով Վրաստանի հավաքականը 14-րդ անգամ դարձավ այդ թիմերի միջեւ ավանդաբար խաղարկվող «Անթիմոզ Իվերիելու» գավաթի գավաթակիրը: Իսկ ինչ վերաբերում է ընթացիկ մրցաշարային աղյուսակին, ապա, Վրաստանի ընտրանին հաղթելով բոլոր չորս հանդիպումներում, 18 միավորով վստահորեն գլխավորում է այն, փաստորեն, ապահովելով այդ մրցաշարում հաղթանակը, ինչպես նաեւ աշխարհի 2023 թվականի առաջնության որակավորումը: Պաշտոնապես այդ մասին հնարավոր կլինի խոսել, երբ հունիսին Վրաստանի հավաքականն իր ուժերը կչափի Բելգիա-Նիդերլանդներ մրցամարտի հաղթողի հետ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆ ԻՐ ԱԿՏԻՎՈՒՄ ԳՐԱՆՑԵՑ ԱՌԱՋԻՆ ՄԻԱՎՈՐԸ

ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	ԽԳ	ԲԳ	Մ
Իսպանիա	3	2	1	0	6	3	7
Շվեդիա	2	2	0	0	4	0	6
Հունաստան	2	0	2	0	2	2	2
Վրաստան	**3**	**0**	**1**	**2**	**2**	**4**	**1**
Կոսովո	2	0	0	2	1	6	0

Աշխարհի առաջնության ընտրական փուլում, երկու հիասթափեցնող պարտություններից հետո, (Շվեդիայի հետ՝ արտագնա հանդիպմանը զիջեցին 0:1 հաշվով, իսկ սեփական հարկի տակ՝ 1:2 հաշվով պարտություն կրեցին Իսպանիայի թիմից), «B» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականն իր ակտիվում գրանցեց առաջին միավորը: Երրորդ տուրում վրաց ֆուտբոլիստների արտագնա հանդիպումը, Հունաստանի դեմ մրցամարտն ավարտեցին 1:1 հաշվով եւ վաստակեցին առաջին միավորը:

Երրորդ տուրից հետո «B» խմբի աղյուսակը 7 միավորով գլխավորում է Իսպանիայի հավաքականը: Առաջատարին մեկ միավորով զիջում է Շվեդիայի թիմը: Երրորդ հորիզոնականը՝ 2 միավորով զբաղեցնում է Հունաստանի թիմը, մեկ միավոր ունի Վրաստանի հավաքականը: Աղյուսակը 0 միավորով եզրափակում է Կոսովայի թիմը:

Հաջորդ, չորրորդ տուրի հանդիպումները Վրաստանի թիմը կանցկացնի սեպտեմբերին: Սեպտեմբերի 2-ին սեփական հարկի տակ կընդունի Կոսովոյի հավաքականին, սեպտեմբերի 5-ին կհյուրընկալվի Իսպանիայի հավաքականին:

9 ՀՆԱՐԱՎՈՐԻՑ՝ 9 ՄԻԱՎՈՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ «J» ԽՄԲԻ ՄԻԱՆՁՆՅԱ ԱՌԱՋԱՏԱՐՆ Է

ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	ԽԳ	ԲԳ	Մ
Հայաստան	**3**	**3**	**0**	**0**	**6**	**2**	**9**
Հյուսիսային Մակեդոնիա	3	2	0	1	9	4	6
Գերմանիա	3	2	0	1	5	2	6
Իսլանդիա	3	1	0	2	4	6	3
Ռումինիա	3	1	0	2	5	6	3
Լիխտենշտեյն	3	0	0	3	1	10	0

Մարտի 31-ին, աշխարհի 2022 թվականի առաջնության «J» խմբում հանդես եկող Հայաստանի հավաքականը, տոնեց երրորդ անընդմեջ հաղթանակը եւ հայկական ֆուտբոլի պատմության մեջ առաջին անգամ միանձնյա գլխավորեց խմբի մրցաշարային աղյուսակը: Հայաստանի ընտրանին Լիխտենշտեյնի հավաքականին մրցակցի դաշտում հաղթելուց հետո (1:0), սեփական հարկի տակ պարտության մատնեց Իսլանդիայի (2:0) եւ Ռումինիայի (3:2) հավաքականներին:

3 տուրից հետո, Խոակին Կապառոսի սաները՝ Հայաստաի ֆուտբոլի ազգային թիմի ֆուտբոլիստները, ունեն 100 տոկոս արդյունք՝ երեք խաղ, երեք հաղթանակ եւ 9 միավոր: Երկրորդ եւ երրորդ տեղերում 6-ական միավորով Հյուսիսային Մակեդոնիայի եւ Գերմանիայի ընտրանիներն են: Ռումինիան եւ Իսլանդիան ունեն 3 միավոր: Իսկ Լիխտենշտեյնն առհասարակ միավոր չունի:

Սեպտեմբերին մեկնարկող 4-րդ տուրում Հայաստանը մրցակցի դաշտում ուժերը կչափի Հյուսիսային Մակեդոնիայի (սեպտեմբերի 2), իսկ սեպտեմբերի 5-ին՝ Գերմանիայի հավաքականի հետ: Սեպտեմբերի 8-ին սեփական հարկի տակ կընդունի Լիխտենշտեյնի հավաքականին:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՆՈՐ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐ՝ 50 ԹԵԹՐԻՈՎ

Ապրիլի 1-ից մայրաքաղաքում նոր միկրոավտոբուսներով ճանապարհորդությունը 80 թեթրիի փոխարեն կլինի 50 թեթրի, իսկ տոմս վերցնելուց հետո՝ ուղեւորը կկարողանա մեկուկես ժամ անվճար երթեւեկել մետրոյով, ավտոբուսով եւ նոր միկրոավտոբուսով: Նոր միկրոավտոբուսներում ուղեւորները նույնպես կօգտվեն բոլոր այն բարեպաստ պայմաններից, որոնք ներկայումս գործում են մետրոյում եւ ավտոբուսներում:

ՄԱՀԱՑԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՎԱԴԻՄ ՇՈՒԲԼԱԶԵՆ



Կյանքի 87-րդ տարում վախճանվել է Հայաստանի եւ Վրաստանի արվեստի վաստակավոր գործիչ, ժամանակին հայկական ռադիոյի եւ հեռուստատեսության սիմֆոնիկ մեծ նվագախմբի դիրիժոր, Երեւանի կոնսերվատորիայի ընդունելության հանձնաժողովի բազմակի ղեկավար, Հայաստանի եւ Վրաստանի ժողովրդական արտիստ, օպերային երգչուհի էլվիրա Ուզունյանի նախկին ամուսին՝ Վադիմ Շուբլաձեն:

«Վրաստան» թերթը իր վշտակցությունն է հայտնում ճանաչված արվեստագետի հարազատներին՝ մեծ երաժշտի մահվան կապակցությամբ:



1 2 3 4 5 6
7 8 9
10
11 12 13 14 15
16 17
18 19 20 21
22 23 24
25 26
27 28 29 30 31
32
33 34 36
37 38 39
40 41 42 43
44 45 46 47 48
49 50 51 52
53 54 55 56
57 58

ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Շուտահաս: 9.Միավորների կիսում սպորտում: 10.Կտրված ծառի մնացորդ: 11.Լոլիկ: 13.Քաղաք Վրաստանում: 16.Քաղաք Իսպանիայում: 17.Բարձրագույն ուսումնական հաստատություն: 19.Ֆրանսիացի գրող ... Ռոլան: 22.Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Նիկոլ ...: 24.Ֆիլմ, կինո: 25.Լիճ Ֆիլիպիններում: 27.Հնկայական չափերի հասնող ջրային ալիքներ: 29.Իտալացի դերասանուհի, մոդել ... Բելուչի: 32.Վալախիայի իշխան Վլադ Ցեպեշ (Ռումինիա): 33.Ռուսական «հաղթական» ավտոմեքենա: 35.Ջինանշան: 37.Սեգ, սիգապանծ: 39.Հրազդան գետը՝ հնում: 40.Անառիկ: 43.Կերակուր եփելու կավե մեծ աման: 44.Պետություն Աֆրիկայում: 47.Արեգակ: 49.Հիմնարկի գրագրությունները վարելու տեղը, գրասենյակ: 50.«Օդային» նախածանց: 53.Ծնոտ (ժող.): 54.Դաշնային սահմանադրական հանրապետություն Հյուսիսային Ամերիկայում, որը բաղկացած է որոշակի ինքնավարություն ունեցող 50 նահանգներից: 55.Դաբաղող նյութ, որ պարունակում են որոշ բույսեր: 57.Ֆրանսիայի մարշալ, Նապոլեոն I Բոնապարտի զինակիցներից, Միշել ...: 58.Եղեգնուտ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Նոյի թոռներից: 2.Քիմիական տարր: 3.Հայկական տպագրության սկզբնավորող եւ հիմնադիր ... Մեղապարտ: 4.Փոթորիկ: 5.Կոկորդի արտադրություն: 6.Ուսյալ, կրթված: 8.Հոսող: 12.Փաղեժ, տարանտուլ: 14.Ցրված բեկորների կույտ: 15.Դրախտ: 18.Խնամք, հոգատարություն: 19.Մարզական արտադրանքի ֆիրմա: 20.Նահանգ ԱՄՆ-ում: 21.Քարթլիի թագուհի (մոտ 285-335 թթ.): 23.Հայ բանաստեղծ ... Սենալ: 26.Իտալացի երգահան Ջուզեպպե Վերդիի օպերա՝ չորս գործողությամբ: 28.Ուշի-...: 29.Ալյուրը զտելու հարմարանք: 30.Փափուկ կոնֆետ: 31.Ըստ հերթականության: 34.Գերմանիայի մայրաքաղաքը: 36.Կենդանու ազդր, զիստ: 38.Բարձունք, լեռ: 41.Ազգ ՌԴ-ում: 42.Պարտված մարզիկի կողմից նույն մարզիկին հաղթելը: 45.Անվանակից: 46.Ռուսաստանի «Ահեղ» ցարը: 48.Թաիլանդի հին անունը: 51.Կեղտ, զիբիլ: 52.Սապատավոր կենդանի: 56.Բացականչություն:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Բալետ: 3.Թոնդրակ: 10.Դումա: 12.Րոպե: 15.Որդ: 16.Աբուլ: 17.Կրակ: 18.Թաթա: 19.Նողկանքի: 20.Սանդրա: 23.Սոնա: 27.Մակրոն: 29.Ուվեզյան: 32.Բրա: 33.Նամուս: 35.Մետր: 36.Իսանի: 37.Արագ: 38.Ես: 39.Թրաշ: 40.Մանր: 42.Ջի: 43.Դար: 44.Վակե: 46.Գնորդ: 48.Ակումբ: 50.Խլուրդ: 51.Ուստիան: 52.Սամում: 53.Կրկին:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Բերկրի: 2.Երեկո: 4.Որդան: 5.Դմանիս: 6.Ադաք: 7.Կուբա: 8.Մալագա: 9.Լորկա: 11.Մութ: 13.Որ: 14.Պանդոկ: 21.Արզնի: 22.Դրամա: 23.Սա: 24.Նրբերշիկ: 25.Աորտա: 26.Սուրամի: 27.Մցխեթա: 28.Նարգիզ: 30.Յասոն: 31.Նուննե: 34.Սիսակ: 35.Մաազա: 40.Մար: 41.Արդար: 43.Դորպատ: 44.Վոլգա: 45.Երդում: 46.Գրետա: 47.Կուրսկ: 49.Բեռն:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՑՈ ՄՈՆԱՍՅԱՐՈՑ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱՓՈՆԵԼԻՆ ՓՂՀ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5
ԹԵԼ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445